

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

Օրակարգում

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2026-2027 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ
3. Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ, դեկան Ա.Ս.Գալստյան, – Հարգելի գործընկերներ նախ ուզում եմ շնորհավորել բոլորիս նոր ուսումնական տարվա սկիզբը, ցանկանալ բեղուն աշխատանք, եռանդ և մասնագիտական նորանոր հաջողություններ: Օրակարգին բոլորդ ծանոթ եք՝ ավելացումներ, փոփոխություններ ունե՞ք. Հաստատենք ներկայացված օրակարգը և անցնենք աշխատանքի: Քվեարկության միաձայն արդյունքով (16 կողմ) հաստատվեց օրակարգը: Ուզում եմ Ձեզ ներկայացնել մի քանի հրամաններ և շրջաբերականներ՝ 1. Աշխատողին ծնողական ժամ տրամադրելու կարգի մասին է

2. ԵՊՀ կրթական ստորաբաժանումների ղեկավարներին և դասախոսական կազմի աշխատողներին չվճարվող արձակուրդ տրամադրելու մասին է: Դիմումը նախապես պետք է համաձայնեցվի անմիջական ղեկավարի հետ և տեղադրվի e-requests.y-su.am հարթակում արձակուրդի տրամադրման օրվանից առնվազն 3 օր առաջ: Գիտական աշխատողների հերթական առեստավորում անցկացնելու և հաստատելու մասին: Առեստավորման գործընթացի նկատմամբ հսկողությունը հանձնարարվում է ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ.Բարխուդարյանին:

Քիմիայի ֆակուլտետի մեթոդ խորհուրդը լուծարվել է և ստեղծվել է «ԵՊՀ հիմնադրամի

ակադեմիական միավորի որակի ապահովման և մեթոդական հանձնաժողով» Հանձնաժողովի կազմը հետևյալն է Նախագահ Գ.Ս.Գրիգորյան, անդամներ Գ.Ա.Շահինյան, Լ.Վ.Կարապետյան և ուսանողուհի Զ.Ա.Հովհաննիսյան: Բոլոր հարցերը մեթոդաբանության, դասագրքերի և ծրագրերի հետ կապված իրականացվելու և հսկվելու է «ԵՊՀ հիմնադրամի ակադեմիական միավորի որակի ապահովման և մեթոդական հանձնաժողով»-ի կողմից:

ՀՀ կայանալիք ՄԱԿ-ի «Կողմերի 17-րդ» համաժողովի COP17 հետ պայմանավորված դասերը բաշխվելու են 2-7 -րդ շաբաթների միջև, 9-րդ շաբաթը անցկացվելու է 10-րդ շաբաթում, իսկ 10-րդ շաբաթվա դասերը բաշխվելու են 11-17-րդ շաբաթվա ընթացքում:

Սեպտեմբերի 1-9-ը ժամանակահատվածում պետք ՈւԿՀ-տրիոյթում, համապատասխան դասընթացի էջում տեղադրվեն դասընթացի պլանները, հանձնարարականները, գրականությունը, դասընթացին վերաբերվող բոլոր նյութերը:

Այս բոլոր հրամանները և շրջաբերականները գրասենյակը ուղարկել է և ամփոփների վարիչներին և աշխատակիցներին, ուշադիր եղեք հետևեք ժամանակացույցին:

Այժմ անցնենք «Աշխատանքնային օրակարգի» քննարկմանը: Արդեն իսկ որոշակի փոփոխություններ կատարվել են գիտխորհրդի անդամների կողմից և այժմ ներկայացվում է ուղղված տարբերակը.

քակարգի առաջին հարց

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ուսումնական տարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

Օգոստոս

Ֆակուլտետի գիտական խորհրդի 2026-2027 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ

Ընթացիկ հարցեր

Մեկտեմբեր

☒ Ամբիոնի վարիչների հաղորդումը լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

☒ «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (նախորդ տարվա 2-րդ կիսամյակի արդյունքներ)

☒ Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների ուղղակի կապումների հաստատումը և կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:

Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:

Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:

Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):

Ընթացիկ հարցեր:

Փետրվար

Ամբիոնի վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի և արդյունքների քննարկում:

Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում(գիտական աշխատանքների արդյունքների քննարկում)

Մարտ

Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:

Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:

Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:

Ընթացիկ հարցեր:

Մայիս

Քիմիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը 2026-2027 ուս

☒ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
Ամբիոնների վարիչների հաղորդումը դասախոսների մասին(դասախոսների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):

Ընթացիկ հարցեր:

Հունիս Ս

Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:

Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

ԵՊՀ հիմնադրամի ակադեմիական միավորի որակի ապահովման և մեթոդական հանձնաժողովի նախագահի հաշվետվություն

Ընթացիկ հարցեր:

Հունիս Բ

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2026-27 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2026-27 ուս. տարում կատարած աշխատանքների մասին⁶

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը

Ընթացիկ հարցեր:

Քննարկված և հաստատված է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2026թ. օգոստոսի 31-ին կայացած թիվ 1 նիստում

իմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան – Այժմ անցնենք օրակարգի երկրորդ հարցին. «Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ»

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան, - Ամբիոնը պատրաստ է նոր ուսումնական տարվան: Լաբորատորիաների ծանրաբեռնվածությունները արդեն տրված են:

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Բ.Մարտիրյան,- Մեզ մոտ ամեն ինչ կարգին է, պատրաստ ենք դասերին:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյան,- Մենք նույնպես պատրաստ ենք:

Ա.Ս.Գալստյան,- Հարգելի գործընկերներ 8-րդ շաբաթվա դասերի տեղափոխման գործընթացը կազմակերպեք հնարավորինս արագ:

Նիստի նախագահ՝ Ա.Ս.Գալստյան,- օրակարգի ընթացիկ հարցերը մի քանիսն են

ա. «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում կատարած աշխատանքների վերաբերյալ ամփոփիչ հաշվետվությունը են ներկայացնում Գ/Հ կենտրոնի Ասիմետրիկ կատալիզի գիտական խմբի կրտսեր գիտաշխատող, ք.գ.թ. Տիգրան Հայկի Եզանյանը և Գ/Հ կենտրոնի, “Անօրգանական քիմիա” լաբորատորիայի գիտաշխատող, դ.գ.թ. Հայկ Ռազմիկի Պետրոսյան

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի, Գ/Հ կենտրոնի Ասիմետրիկ կատալիզի գիտական խմբի կրտսեր գիտաշխատող, ք.գ.թ. Տիգրան Հայկի Եզանյանի ամփոփիչ հաշվետվությունը «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում կատարած աշխատանքների վերաբերյալ: Մրցույթն ուղղված էր ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող գիտական կազմակերպություններին և բուհերի աշխատակիցներին, այդ թվում՝ երիտասարդ գիտական կադրերի մասնագիտական որակավորման բարձրացմանը: Մասնագիտական վերապատրաստումը S⁺Հ⁺Եզանյանը իրականացրել է Յոհաննես Կեպլերի անվան Լինցի համալսարանում (Ավստրիա), պրոֆեսոր Մարիո Վասերի թիմում: Վերապատրաստման արդյունքում իրականացվել է գուգորդված կետոնների և ալենոատների փոխազդեցությամբ ստերեոսելեկտիվ ցիկլոմիացման գործընթացը: Նման հետազոտություններից մեկում հայտնաբերվել էր ցիկլոմիացման կողմնակի պրոդուկտ (B): Նախկինում իրականացված հետազոտությունների արդյունքում B միացությունը հաջողվել էր ստանալ առավելագույնը 34% ելքով և 48% էնանտիոմերային ավելցուկով: Փոխվել է ռեակցիայի ռեգեոսելեկտիվությունը B պրոդուկտի առաջացման կողմ, միաժամանակ մեծացնելով էնանտիոսելեկ—

տիվությունը 98%: Քանի որ նախկինում արդեն իսկ ուսումնասիրվել էր ջերմաստիճանից, լուծիչների մեծ շարքից, ինչպես նաև ռեագենտների հարաբերակցությունից կախվածությունը, ուսումնասիրվել է հավելանյութերի ազդեցությունը ռեակցիայի ռեգիո և ստերեոսեկտիվության վրա: Ռեակցիայի ասիմետրիկությունը ուսումնասիրել է քիրալ աշտարակներով HPLC-ի մեթոդով: Աշխատանքի ընթացքում գրանցվել են որոշակի հաջողություններ, որոնք ապահովվում են ռեակցիաների ընտրողականությունը: Պրոֆեսոր Վասերի խմբում շարունակվում են հետազոտությունները, դրված խնդիրը ամբողջությամբ լուծելու համար:

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով՝ հաստատել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի, Գ/Հ կենտրոնի Ասիմետրիկ կատալիզի գիտական խմբի կրտսեր գիտաշխատող, ք.գ.թ. Տիգրան Հայկի Եզանյանի «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում կատարած աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունը:

բ. Լսեցին — ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի, Գ/Հ կենտրոնի, “Անօրգանական քիմիա” լաբորատորիայի գիտաշխատող, դ.գ.թ. Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ամփոփիչ հաշվետվությունը «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հայկ Պետրոսյանը 2026 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 31-ը մասնակցել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Մասնագիտական վերապատրաստում 2025» ծրագրով ֆինանսավորվող 25PTS-1D013 ծածկագրով՝ «Նոր կոորդինացիոն միացություններ օրգանական լիգանդներով. սինթեզ և կենսաբանական ակտիվություն» թեմայով վերապատրաստմանը: Վերապատրաստումն իրականացվել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում՝ Կոտնակովի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի Կոորդինացիոն բազմամիջուկային միացությունների քիմիայի լաբորատորիայում՝ քիմիական գիտությունների դոկտոր Իրինա Լուցենկոյի ղեկավարությամբ:

Վերապատրաստման ընթացքում կատարվել են ծրագրով նախատեսված գիտահետազոտական աշխատանքներ, որոնք ուղղված են եղել կենսաբանական և լյումինեսցենտ հատկություններով օժտված նոր կոորդինացիոն միացությունների բյուրեղների ստացմանն ու ուսումնասիրությանը: Սինթեզվել են նոր կոորդինացիոն միացություններ և իրականացվել է վերջիններիս ռենտգեն-կառուցվածքային, ռենտգեն-ֆազային ուսումնասիրությունները: Հետագա աշխատանքների շրջանակում նախատեսվում է իրականացնել ստացված միացությունների ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունների խորացված ուսումնասիրություններ՝ լյումինեսցենտ բնութագրերի և կենսաբանական ակտիվության գնահատման ուղղությամբ: Վերապատրաստման արդյունքում ձևավորվել են նոր գիտական փոխգործակցության հիմքեր Կուռնակովի անվան Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի Կոորդինացիոն բազմամիջուկային միացությունների քիմիայի լաբորատորիայի և Երևանի պետական համալսարանի Քիմիայի գիտահետազոտական կենտրոնի միջև:

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով՝ հաստատել “Անօրգանական քիմիա” լաբորատորիայի գիտաշխատող, դ.գ.թ. Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ամփոփիչ հաշվետվությունը՝ աշխատանքների ոլորտում:

գ. Ա.Ս.Գալստյան - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդում հաստատելու են առաջին տարվա ասպիրանտներ Ա.Գևորգյանի, Ա.Պետրոսյանի և Ա. Սուլոյանի թեկնածուական ատենախոսությունների վերնագրերը և ղեկավարներին:

Լսեցին –Օրգանական քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Արսյոմ Վարուժանի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան ԱՍՍԳալստյանը հաղորդեց, որ Ա.Վ.Պետրոսյանը գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի

Քիմիա» բաժնի կրթական ծրագրերը: Ամբիոնում քննարկվել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկվել է «Պոտենցիալ ասիմետրիկ օրգանոկատալիտիկ համակարգերի սինթեզ 1,2,4-տրիագոլների հենքի վրա և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում» թեման Բ.00.03 «Օրգանական քիմիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար՝ դոցենտ ԱՄՍԳալստյան:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց հաստատել ասպիրանտ Արսյոմ Վարուժանի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման «Պոտենցիալ ասիմետրիկ օրգանոկատալիտիկ համակարգերի սինթեզ 1,2,4-տրիագոլների հենքի վրա և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում» վերնագրով: «Օրգանական քիմիա» մասնագիտությամբ, Բ.00.03 ծածկագրով, իսկ ղեկավար հաստատել դոցենտ Արմեն Սուրենի Գալստյանին:

Լսեցին –Օրգանական քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Աննա Խոսրովի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի ղեկան ԱՄՍԳալստյանը հաղորդեց, որ Ա.Խ.Գևորգյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Ամբիոնում քննարկվել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկվել է «Քլիք քիմիայի դասի ռեակցիաներով և դրանց համադրմամբ կատալիզատորների սինթեզ» թեման Բ.00.03 Գալստյան:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց հաստատել ասպիրանտ Աննա Խոսրովի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման «Քլիք քիմիայի դասի ռեակցիաներով և դրանց համադրմամբ կատալիզատորների սինթեզ» վերնագրով:

Օրգանական քիմիա» մասնագիտությամբ, Բ.00.03 ծածկագրով, իսկ ղեկավար հաստատել դոցենտ Արմեն Սուրենի Գալստյանին:

Լսեցին –Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի ապիրանտ Աննա Միխայիլի Սուլյանի ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի ղեկան ԱՍՍԳալստյանը հաղորդեց, որ Սուլյան Աննան ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, աշխատում է Քիմիա Գ/Հ կենտրոնում, որպես ավագ լաբորանտ: Ամբիոնը քննարկել է նրա ղեկավարի հարցը և առաջարկել է ք.գ.թ. Ա.Ի.Մարտիրյանին

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց՝ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի առաջին տարվա ապիրանտ Աննա Միխայիլի Սուլյանի ղեկավարի հաստատել Արմեն Իգնատիոսի Մարտիրյանին:

Դ. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած քիմիայի ամբիոնի առաջին տարվա ուսանողներ Ա.Վ.Պետրոսյանը, Ա.Խ.Գևորգյանը և երկրորդ տարվա հայցորդ Ա.Ա.Նիգարյանը(ներկայացված հայտերի էլեկտրոնային տարբերակը Ձեզ տրված է եղել)

Լսեցին. – «Պոտենցիալ ասիմետրիկ օրգանոկատալիտիկ համակարգերի սինթեզ 1,2,4-տրիագոլների հենքի վրա և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած գիտահետազոտական կենտրոնի, Ասիմետրիկ կատալիզի գիտական խմբի կրտսեր գիտաշխատող, առաջին տարվա ասպիրանտ Արտյոմ Վարուժանի Պետրոսյան:

Ծրագրի նպատակն է L-պրոլինից և դրա անալոգներից ստանալ 1,2,4-տրիագոլի հենքով օրգանոկատալիզատորներ և գնահատել դրանց կատալիտիկ ակտիվությունն ու սելեկտիվությունը մոդելային Ալդոլ, Միքայելի և Մանիքի ռեակցիաներում:

Կուսումնասիրվեն տեղակալիչների ազդեցությունը էնանտիոսելեկտիվության վրա, ինչպես նաև կատալիզատորների կառուցվածք-էնանտիոսելեկտիվություն կապը՝ հաշվարկային քիմիայի մեթոդներով: Ասիմետրիկ օրգանոկատալիզը ժամանակակից օրգանական քիմիայի կարևոր ուղղություն է, որը հնարավորություն է տալիս ստանալ էնանտիոմերապես հարստացված կամ մաքուր միացություններ: Նոր, բարձր արդյունավետությամբ և էնանտիոսելեկտիվությամբ օրգանոկատալիզատորների մշակումը կարևոր խնդիր է ժամանակակից օրգանական քիմիայում: 1,2,4-տրիագոլի ածանցյալները, շնորհիվ իրենց յուրահատուկ էլեկտրոնային կառուցվածքի և ֆունկցիոնալացման լայն հնարավորությունների, հեռանկարային հենք են ասիմետրիկ կատալիզատորների ստացման համար: Ակնկալվում է ստանալ բարձր էնանտիոսելեկտիվությամբ կատալիզատորներ, մշակել դրանց արդյունավետ սինթեզի մեթոդներ և ուսումնասիրել դրանց ազդեցության մեխանիզմները՝ հիմք ստեղծելով հետագա հետազոտությունների և բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրապարակումների համար:

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով՝ երաշխավորել «Պոտենցիալ ասիմետրիկ օրգանոկատալիտիկ համակարգերի սինթեզ 1,2,4-տրիագոլների հենքի վրա և դրանց կատալիտիկ ակտիվության որոշում» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթի (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու հայտը, թեմայի ղեկավար ԵՊՀ Քիմիա Գ/Հ կենտրոնի, Ասիմետրիկ կատալիզի գիտական խմբի կրտսեր գիտաշխատող, առաջին տարվա ասպիրանտ Արսյոմ Վարուժանի Պետրոսյան:

Լսեցին. – «Քլիք քիմիայի դասի ռեակցիաներով և դրանց համադրմամբ ֆունկցիոնալացված միացությունների սինթեզ» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթի (թեմատիկ) ֆինանսավորում

ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար ԵՊՀ Քիմիա գիտահետազոտական կենտրոնի, ավագ լաբորանտ, առաջին տարվա ասպիրանտ Աննա Խոսրովի Գևորգյան:

Նախագծի նպատակն է քլիք քիմիայի դասին պատկանող ռեակցիաների կիրառմամբ (օրինակ, CuAAC, թիո/ազա-Միքայելի միացման, օքսիրանային օդակի բացման և այլն) և դրանց համադրմամբ իրականացնել կանխատեսվող հատկություններով թիրախային մոլեկուլների սինթեզ, ինչպես նաև մշակել դրանց ընթացքի օպտիմալ պայմանները: Ստացված միացությունների կառուցվածքը բնութագրել ժամանակակից ֆիզիկաքիմիական եղանակներով, օրինակ, ՄՄՌ(NMR), ԻԿ(IR), ԷՇԴ(ECD), ՌԿՄ(X-ray), ԲԼՄՄ(HRMS) և այլ: Սինթեզված համակարգերն առաջնահերթ հետազոտվելու են որպես կատալիզորդներ մոդելային ասիմետրիկ օրգանական ռեակցիաներում, ինչպես նաև գնահատվելու է սինթեզված միացությունների պոտենցիալ կենսաբանական ակտիվությունը *in silico* միջավայրում, հնարավորության դեպքում կիրականացվեն նաև դրանց *in vivo* և/կամ *in vitro* փորձարկումներ:

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով՝ երաշխավորել «Քլիք քիմիայի դասի ռեակցիաներով և դրանց համադրմամբ ֆունկցիոնալացված միացությունների սինթեզ» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթի (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար ԵՊՀ Քիմիա գիտահետազոտական կենտրոնի, ավագ լաբորանտ, առաջին տարվա ասպիրանտ Աննա Խոսրովի Գևորգյան:

Լսեցին. – «Մանդամթերքի խելացի փաթեթվածքի pH զգայուն սենսորի պատրաստում խաղողի պտուղներից կորզած ներկանյութերի հիման վրա» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած

թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար երկրորդ տարվա հայցորդ Արթուր Արարատի Նիգարյան:

Նախագիծը նպատակաուղղված է խաղողի վերամշակման երկրորդային հումքի՝ անտոցիաններով հարուստ կեղևի օգտագործմամբ բնական pH-զգայուն ինդիկատորների մշակմանը և սննդամթերքի խելացի փաթեթվածքի համակարգերում դրանց կիրառման հնարավորության գնահատմանը: Նախատեսվում է խաղողի կեղևից ստանալ անտոցիանային էքստրակտներ, ուսումնասիրել դրանք, այդ թվում միջավայրի pH-ից կախված գունափոխությունը և ներառել համապատասխան կենսապոլիմերային մատրիցում: Ստացված ինդիկատորի զգայունությունը, կայունությունը եւ գունային արձագանքը կգնահատվեն մոդելային համակարգերում և ընտրված արագ փչացող սննդամթերքի պահպանման ընթացքում: Հետազոտության արդյունքում նախատեսվում է մշակել այդ թվում նաև կենսաքայքայվող ինդիկատոր-պիտակի փորձնական նախատիպ, որը գունային փոփոխությամբ հնարավորություն կտա գնահատել սննդամթերքի թարմության վիճակը՝ առանց փաթեթը բացելու: Նախագիծը կնպաստի գինեգործական երկրորդային հումքի արժեքավորմանը, սննդամթերքի որակի վերահսկման նոր մոտեցումների զարգացմանը եւ սննդային կորուստների նվազեցմանը:

Որոշեցին - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով՝ երաշխավորել «Սննդամթերքի խելացի փաթեթվածքի pH զգայուն սենսորի պատրաստում խաղողի պտուղներից կորզած ներկանյութերի հիման վրա» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կազմակերպած «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթի (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար երկրորդ տարվա հայցորդ Արթուր Արարատի Նիգարյան:

Ե. Ա.Ս.Գալստյան -հարգելի գործընկերներ Քիմիա Գ/Հ կենտրոնի անօրգանական քիմիա լաբորատորիան լուծարվել է, փոխարեն ստեղծվել է

անօրգանական քիմիա գիտական խումբ և խմբի ղեկավար է նշանակվել
Հ.Ռ.Պետրոսյանը:

Նիստի նախագահ,
Քիմիայի ֆակուլտետի ղեկան

Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար,

Դոցենտ

Մ.Ա.Սամվելյան